

**Հաստատված է
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ամբիոնի << 31 >> << 08>> 2018. նիստում
(արձ. թիվ 1)
Ամբիոնի պետ _____ Մ. Մուրադյան
2018թ.**

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Քաղաքացիական իրավունք - 3
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտություն, վճարովի ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ <ul style="list-style-type: none"> ▪ մասնաշենք/սենյակ ▪ հեռախոս ▪ էլ հասցե ▪ Web կայքի հասցե 	Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոն
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Դ. Օհանյան 077626161
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	3-րդ կուրս, 1-ին կիսամյակ

ԿՐԵԴԻՏՆԵՐ	5 / հինգ /
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ	«Քաղաքացիական իրավունք 1» դասընթացի ընդհանուր

<p>ԲԱՇԽՈՒՄ</p>	<p>ծավալը կազմում է 150 ժամ, որից 48 ժամ դասախոսություն, 26 ժամ սեմինար պարապմունք, 6 ժամ գործնական պարապմունք, 70 ժամ ինքնուրույն աշխատանք:</p> <p>Գործնական պարապմունքի համար նախատեսված ժամերին սովորողը լուծում է գործնական խնդիրներ և վարժություններ, պատրաստվում է հաջորդ դասին: Ինքնուրույն աշխատանքի համար հատկացված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ստուգաքոջ հանձնելով:</p>
<p>ՆԱԽԱԴԱՅՄԱՆ</p>	<p>Դասընթացը կառուցվում է «ՀՀ քաղաքացիական իրավունք» դասընթացի իմացության վրա:</p>
<p>ՀԱՄԱՌՈՏ</p> <p>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</p>	<p>Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են քաղաքացիաիրավական պայմանագրի հասկացությունը, տեսակները, կնքման ձևը, փոփոխելը, դադարումը, գույքի օտարման պայմանագրերի հասկացությունը և տեսակները, գույքի վարձակալության և այն անհատույց օգտագործման հանձնելու պայմանագրերի հասկացությունը և տեսակները, աշխատանքներ կատարելու և ծառայություններ մատուցելու պայմանագրերի հասկացությունը և տեսակները, միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների հասկացությունը և տեսակները</p>
<p>ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ</p>	<p>Դասընթացի նպատակն է սովորողներին տալ համապարփակ գիտելիքներ՝</p> <ul style="list-style-type: none"> • քաղաքացիաիրավական պայմանագրի հասկացության, տարրերի, տեսակների, կնքման ձևի, փոփոխման և դադարման մասին • գույքի օտարման պայմանագրերի հասկացության, տեսակների, բովանդակության, դրանց կնքման ձևին ներկայացվող օրենսդրական պահանջների և դադարման մասին • գույքի վարձակալության և այն անհատույց օգտագործման հանձնելու պայմանագրերի հասկացության, տեսակների, բովանդակության, դրանց կնքման ձևին ներկայացվող օրենսդրական պահանջների և դադարման մասին • աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի հասկացության, տեսակների, բովանդակության, դրանց կնքման ձևին ներկայացվող օրենսդրական պահանջների և դադարման մասին • միակողմանի գործողություններից ծագող

	<p>պարտավորությունների հասկացության, տեսակների, բովանդակության մասին</p>
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p>Կարողանա՝</p>	<ol style="list-style-type: none"> 1. ընկալել քաղաքացիաիրավական պայմանագրի հասկացությունը, տեսակները, տարրերը, բովանդակությունը և ձևը, կնքման կարգը, փոփոխելը և լուծելը 2. սահմանել գույքի օտարման պայմանագրերի տեսակները, դրանց հասկացությունը և բովանդակությունը 3. ընկալել գույքի օտարման պայմանագրերի տեսակների առանձնահատկությունները 4. սահմանել գույքի վարձակալության և այն անհատույց օգտագործման հանձնելու պայմանագրերի տեսակները, դրանց հասկացությունը և բովանդակությունը 5. ընկալել գույքի վարձակալության և այն անհատույց օգտագործման հանձնելու պայմանագրերի տեսակների առանձնահատկությունները 5. սահմանել աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի տեսակները, դրանց հասկացությունը և բովանդակությունը 6. ընկալել աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի տեսակների առանձնահատկությունները 7. սահմանել միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների հասկացությունը, տեսակները և բովանդակությունը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
Հիմնական	<ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ 2. Բարսեղյան Տ.Կ. - ՀՀ քաղաքացիական իրավունք, Մաս առաջին, 3-րդ հրատարակչություն, Երևան, 2006թ.

	<p>3. Ավետիսյան Վ.Դ., Մեդրյան Ս.Գ. - Քաղաքացիական իրավունք / գործնական պարապմունքների ձեռնարկ/ , Մաս առաջին, ԵՊՀ հրատարակչություն, Երևան-2006թ.</p> <p>4. Հայկական ՍՍՀ քաղաքացիական իրավունք, հատոր 1, Ս. Հ. Հովհաննիսյանի խմբ., Եր., ԵՊՀ հրատ., 1978թ.</p> <p>5. Պետրոսյան Ռ. Գ, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Եր. , 2003</p> <p>6. Гражданское право / Под ред. А. И. Калпина, А. И. Масляева. — М.: Проспект, 2011</p> <p>7. Гражданское право / под общ. ред. С.С. Алексеева. - М. : Норма, 2006</p> <p>8. Актуальные проблемы гражданского права: сборник ст. - М. Вып.4. - 2002.</p> <p>9. Комментарий к Гражданскому Кодексу Российской Федерации: части первой. под ред. Н. Д. Егорова и А.П. Сергеева, М. , 2005</p> <p>10. Брагинский М. И., Витрянский В.В. Договорное право, Книга первая, общие положения, М. , 2000</p>
Լրացուցիչ	<p>1. Иоффе О. С. Обязательственное право В., 2004</p> <p>2. Сватье Р. Теория обязательств, М, 2004</p> <p>3. Новицкий И. Б., Лунц Л. А. Общее учение об обязательстве, М., 1950</p> <p>4. В. В. Витрянский. Договор Аренды и его виды</p> <p>5. Ломидзе О.Г. Договор купли-продажи. М., 2005</p> <p>6. Шахов В.В. Страхование. М.: Финансы и статистика, 2000 г.</p> <p>7. Витрянский, М.И. Договор строительного подряда и иные договоры в сфере строительства / М.И. Витрянский. - М.: Статут, 2005</p>

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Ստուգարք (ստուգված, չստուգված)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՉՆԵՐ / ՄԵԽԱՆԻՉՄԱՆԵՐ	Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
	Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:

<p>Ներկայություն</p> <p>Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ</p> <p>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ</p>	<p>Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:</p>
	<p>Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:</p>
	<p>Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:</p> <p>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՈՒՄ

Թեմա 1

Քաղաքացիաիրավական պայմանագիր

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)

Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Պայմանագրի հասկացությունը և նշանակությունը</p> <p>2. Պայմանագրի տեսակները</p> <p>3. Պայմանագրի բովանդակությունը և ձևը</p> <p>4. Պայմանագրի կնքման կարգը</p> <p>5. Պայմանագիրը փոփոխելը և լուծելը</p>	<p>Հարցեր 1-5 ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-5 սեմինար պարապմունք՝ անհատական հարցումների ձևով</p> <p>Հարցեր 3-5 գործնական պարապմունք՝ սովորողները պատրաստում են գեկույցներ՝ նախապես տրված թեմաներով, լուծում են գործնական խնդիրներ և վարժություններ:</p> <p>Հարցեր 1-5 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները</p>

Թեմա 2 Առուծախի պայմանագիր (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Առուծախի պայմանագրի հասկացությունը և նշանակությունը</p> <p>2. Առուծախի պայմանագրերի տարրերը</p> <p>3. Վաճառողի և գնորդի իրավունքներն ու պարտականությունները, պարտականությունները չկատարելու հետևանքները</p> <p>4. Գնորդի սեփականության իրավունքի ծագման պահը, վաճառված գույքի պատահական կորստի ռիսկը</p> <p>5. Մանրածախ առուծախի պայմանագիր</p> <p>6. Անշարժ գույքի առանձնահատկությունները</p>	<p>Հարցեր 1-6 - ներկայացվում է դասախոսություն՝ խմբակային քննարկման միջոցով:</p> <p>Հարցեր 1-6 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները</p>

Թեմա 3 Մատակարարման պայմանագիր	
---	--

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Մատակարարման պայմանագրի հասկացությունը և առանձնահատկությունները	Հարցեր 1-6 - ներկայացվում է դասախոսություն:
2. Մատակարարման պայմանագրի բովանդակությունը	Հարցեր 1-6-սեմինար պարապմունք՝ անհատական հարցումների միջոցով:
3. Մատակարարման պայմանագրի կատարումը	Հարցեր 1-6 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են ինդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները
4. Մատակարարման պայմանագիրը խախտելու հետևանքները	
5. Ապրանքների մատակարարումը պետական կարիքների համար	
6. Էներգամատակարարման պայմանագիր	

Թեմա 4

**Ռենտայի պայմանագիր
(2 ժամ դասախոսություն)**

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Ընդհանուր դրույթներ ռենտայի պայմանագրի մասին	Հարցեր 1-3 - ներկայացվում է դասախոսություն:
2. Մշտական ռենտայի պայմանագիր	Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են ինդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները
3. Ցմահ ռենտայի պայմանագիր	

Թեմա 5

**Փոխանակության պայմանագիր
(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Փոխանակության պայմանագրի հասկացությունը	Հարցեր 1-3 - ներկայացվում է դասախոսություն:

<p>2. Փոխանակության պայմանագրի տարրերը 3. Փոխանակության պայմանագրի բովանդակությունը</p>	<p>Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք՝ անհատական հարցումների ձևով:</p> <p>Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները</p>
---	--

<p align="center">Թեմա 6</p> <p align="center">Նվիրատվության պայմանագիր</p> <p align="center">(2 ժամ դասախոսություն)</p>	
<p align="center">Թեմայի հարցեր</p>	<p align="center">Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>1. Նվիրատվության պայմանագրի հասկացությունը և տարրերը 2. Նվիրատվության պայմանագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պայմանագրի դադարումը 3. Նվիրաբերություն</p>	<p>Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները</p>

<p align="center">Թեմա 7</p> <p align="center">Վարձակալության պայմանագիր</p> <p align="center">(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)</p>	
<p align="center">Թեմայի հարցեր</p>	<p align="center">Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<p>1. Վարձակալության պայմանագրի հասկացությունն ու տարրերը 2. Վարձույթի պայմանագիր 3. Տրանսպորտային միջոցների վարձակալության պայմանագրեր 4. Շենքերի և շինությունների վարձակալության պայմանագրեր 5. Ֆինանսական վարձակալության / լիզինգի / պայմանագիր</p>	<p>Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-5 – սեմինար պարապմունք՝ սովորողների անհատական հարցումների ձևով:</p> <p>Հարցեր 1-5 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները</p>

Թեմա 8	
Բնակելի տարածության վարձակալության պայմանագիր (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի հասկացությունը և տարրերը	Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն:
2. Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի բովանդակությունը և փոփոխումը	Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները
3. Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի դադարումը	

Թեմա 9	
Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի հասկացությունը և տարրերը	Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն:
2. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի բովանդակությունը	Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք՝ սովորողների անհատական հարցումների ձևով:
3. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողությունը	Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները

Թեմա 10	
Կապալի պայմանագիր (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն

1. Կապալի պայմանագրի հասկացությունը և նշանակությունը	Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն:
2. Կապալի պայմանագրի տարրերը և բովանդակությունը	Հարցեր 1-5 – սեմինար պարապմունք՝ խմբակային քննարկման միջոցով:
3. Կենցաղային կապալի պայմանագիր	Հարցեր 1-5 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները
4. Շինարարական կապալի պայմանագիր	
5. Կապալային աշխատանքներ պետական կարիքների համար	

Թեմա 11	
Ճառայությունների վճարովի մատուցման պայմանագիր	
(2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Ճառայությունների մատուցման պարտավորության հասկացությունը և տեսակները	Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն:
2. Ճառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հասկացությունը և տարրերը	Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները
3. Ճառայությունների վճարովի մատուցման պայմանագրի բովանդակությունը և դադարումը	

Թեմա 12	
Հանձնարարության, կոմիսիայի և գործակալման պայմանագրեր	
(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Հանձնարարության պայմանագրի հասկացությունը և տարրերը:	Հարցեր 1-6 – ներկայացվում է դասախոսություն:
2. Հանձնարարության պայմանագրի բովանդակությունը և դադարումը:	Հարցեր 1-6 – սեմինար պարապմունք՝ խմբակային քննարկման միջոցով:
3. Կոմիսիայի պայմանագրի հասկացությունը և տարրերը:	
4. Կոմիսիայի պայմանագրի բովանդակությունը և դադարումը:	Հարցեր 1-6 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը,
5. Գործակալման պայմանագրի հասկացությունը և	

տարրերը: 6. Գործակալման պայմանագրի բովանդակությունը:	ստուգվում են ընթացիկ առաջադրանքները
---	-------------------------------------

Թեմա 13 Պահատվության պայմանագիր (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Պահատվության պայմանագրի հասկացությունը, տարրերը և տեսակները: 2. Պահատվության պայմանագրի բովանդակությունը: 3. Պահատվության պայմանագրի կողմերի պատասխանատվությունը: 4. Պահատվությունն ապրանքային պահեստում: 5. Պահատվության հատուկ տեսակները:	Հարցեր 1-5 - ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-5 - սեմինար պարապմունք՝ խմբակային քննարկման միջոցով: Հարցեր 1-5 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները

Թեմա 14 Փոխադրման պարտավորություններ (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն

<ol style="list-style-type: none"> 1. Փոխադրման պարտավորությունների իրավական կարգավորումը: 2. Բեռների փոխադրում իրականացնելու նախադրյալները: 3. Բեռների փոխադրման պայմանագիր: 4. Բեռների փոխադրման պայմանագրերի տարբեր տեսակների առանձնահատկությունները: 5. Բեռնափոխադրման պարտավորությունների խախտման համար կիրառվող պատասխանատվությունը: 6. Ուղևորի և ուղեբեռի փոխադրման պայմանագիր: 7. Տրանսպորտային առաքման պայմանագիր: 	<p>Հարցեր 1-7 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-7 – սեմինար պարապմունք՝ խմբակային քննարկման միջոցով:</p> <p>Հարցեր 1-7 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները</p>
--	--

Թեմա 15	
Վարկային և հաշվարկային պարտավորություններ (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Վարկային և հաշվարկային պարտավորությունների հասկացությունը: 2. Փոխառության և վարկային պայմանագրեր: 3. Դրամական պահանջի գիշման դիմաց ֆինանսավորման / ֆակտորինգի/ պայմանագիր: 4. Բանկային ավանդի պայմանագիր: 5. Բանկային հաշվի պայմանագիր: 6. Հաշվարկային պարտավորություններ: 	<p>Հարցեր 1-6 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-6 – սեմինար պարապմունք՝ խմբակային քննարկման միջոցով:</p> <p>Հարցեր 1-6 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները</p>

<p>Թեմա 16</p> <p>Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր</p>
--

(2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի հասկացությունը:</p> <p>2. Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները:</p> <p>3. Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի կողմերի պատասխանատվությունը և դադարումը:</p>	<p>Հարցեր 1-3 - ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները</p>

Թեմա 17	
Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագիր	
(2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագրի հասկացությունը:</p> <p>2. Համալիր թույլտվության պայմանագրի բովանդակությունը:</p> <p>3. Համալիր թույլտվության պայմանագրի կողմերի պատասխանատվությունը և դադարումը:</p>	<p>Հարցեր 1-3 - ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները</p>

Թեմա 18

Ապահովագրություն (2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Ապահովագրության սոցիալ-տնտեսական նշանակությունը և իրավական կարգավորումը:</p> <p>2. Ապահովագրական գործունեության բնագավառում կիրառվող իրավական եզրույթների մեկնաբանությունը:</p> <p>3. Ապահովագրության ձևերը և տեսակները:</p> <p>4. Ապահովագրության պայմանագրի հասկացությունը և տեսակները:</p>	<p>Հարցեր 1-4 - ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-4 գործնական պարապմունք՝ սովորողները պատրաստում են գեկույցներ՝ նախապես տրված թեմաներով, լուծում են գործնական խնդիրներ և վարժություններ:</p> <p>Հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները</p>

Թեմա 19 Համատեղ գործունեության պայմանագիր (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Համատեղ գործունեության պայմանագրի հասկացությունը, պայմանագրի տարրերը:</p> <p>2. Համատեղ գործունեության պայմանագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները:</p> <p>3. Համատեղ գործունեության պայմանագրի դադարումը:</p>	<p>Հարցեր 1-3 - ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-3 սեմինար պարապմունք՝ անհատական հարցումների միջոցով</p> <p>Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները</p>

Թեմա 20 Միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններ (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 2 ժամ գործնական պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն

<p>1. Միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունների հասկացությունը և տարրերը:</p> <p>2. Պարզև վճարելու հրապարակային խոստումը:</p> <p>3. Հրապարակային մրցույթ կազմակերպելը:</p> <p>4. Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունները:</p>	<p>Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-4 սեմինար պարամունք՝ անհատական հարցումների միջոցով</p> <p>Հարցեր 1-4 գործնական պարամունք՝ սովորողները պատրաստում են գեկույցներ՝ նախապես տրված թեմաներով, լուծում են գործնական խնդիրներ և վարժություններ:</p> <p>Հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները</p>
---	--

Հարցաշար

«Քաղաքացիական իրավունք 3» առարկայի ստուգարքի

1. Պայմանագրի հասկացությունը, նշանակությունը և տեսակները
2. Պայմանագրի բովանդակությունը և ձևը
3. Պայմանագրի կնքման կարգը, պայմանագիրը փոփոխելը և լուծելը
4. Առուծախի պայմանագրի հասկացությունը, նշանակությունը և տարրերը
5. Վաճառողի և գնորդի իրավունքներն ու պարտականությունները, պարտականությունները չկատարելու հետևանքները
6. Գնորդի սեփականության իրավունքի ծագման պահը, վաճառված գույքի պատահական կորստի ռիսկը
7. Մանրածախ առուծախի պայմանագիր
8. Մատակարարման պայմանագրի հասկացությունը և առանձնահատկությունները
9. Մատակարարման պայմանագրի բովանդակությունը և կատարումը
10. Մատակարարման պայմանագիրը խախտելու հետևանքները
11. Ապրանքների մատակարարումը պետական կարիքների համար
12. Էներգամատակարարման պայմանագիր
13. Ընդհանուր դրույթներ ռենտայի պայմանագրի մասին
14. Մշտական ռենտայի պայմանագիր
15. Ցմահ ռենտայի պայմանագիր
16. Փոխանակության պայմանագրի հասկացությունը
17. Փոխանակության պայմանագրի տարրերը և բովանդակությունը
18. Նվիրատվության պայմանագրի հասկացությունը և տարրերը
19. Նվիրատվության պայմանագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պայմանագրի դադարումը, նվիրաբերություն
20. Վարձակալության պայմանագրի հասկացությունն ու տարրերը
21. Վարձույթի պայմանագիր
22. Տրանսպորտային միջոցների վարձակալության պայմանագրեր
23. Շենքերի և շինությունների վարձակալության պայմանագրեր
24. Ֆինանսական վարձակալության / լիզինգի / պայմանագիր
25. Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի հասկացությունը և տարրերը

26. Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի բովանդակությունը և դադարումը
27. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի հասկացությունը և տարրերը
28. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի բովանդակությունը և գործողությունը
- Կապալի պայմանագրի հասկացությունը և նշանակությունը
29. Կապալի պայմանագրի տարրերը և բովանդակությունը
30. Կենցաղային կապալի պայմանագիր
31. Շինարարական կապալի պայմանագիր
32. Կապալային աշխատանքներ պետական կարիքների համար
33. Ծառայությունների մատուցման պարտավորության հասկացությունը, տեսակները և տարրերը
34. Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի բովանդակությունը և դադարումը
35. Հանձնարարության պայմանագրի հասկացությունը, տարրերը և բովանդակությունը
36. Կոմիսիայի պայմանագրի հասկացությունը, տարրերը և բովանդակությունը
37. Գործակալման պայմանագրի հասկացությունը, տարրերը և բովանդակությունը
38. Պահատվության պայմանագրի հասկացությունը, տարրերը և տեսակները
39. Պահատվության պայմանագրի բովանդակությունը
40. Պահատվության պայմանագրի կողմերի պատասխանատվությունը
41. Պահատվությունն ապրանքային պահեստում
42. Բեռների փոխադրման պայմանագիր
43. Բեռնափոխադրման պարտավորությունների խախտման համար կիրառվող պատասխանատվությունը
44. Ուղևորի և ուղեբեռի փոխադրման պայմանագիր
45. Տրանսպորտային առաքման պայմանագիր
46. Փոխառության և վարկային պայմանագրեր
47. Դրամական պահանջի գիշման դիմաց ֆինանսավորման / ֆակտորինգի/ պայմանագիր
48. Բանկային ավանդի պայմանագիր
49. Բանկային հաշվի պայմանագիր
50. Հաշվարկային պարտավորություններ
51. Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը
52. Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի կողմերի պատասխանատվությունը և դադարումը
53. Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը
54. Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագրի կողմերի պատասխանատվությունը և դադարումը
55. Ապահովագրության ձևերը և տեսակները
56. Ապահովագրության պայմանագրի հասկացությունը և տեսակները
57. Համատեղ գործունեության պայմանագրի հասկացությունը, պայմանագրի տարրերը
58. Համատեղ գործունեության պայմանագրի բովանդակությունը և դադարումը
59. Պարզև վճարելու հրապարակային խոստումը և հրապարակային մրցույթ կազմակերպելը
60. Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունները